

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ
N 54/11

Քաղ. երեսան

23 նոյեմբերի 2011թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեւյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Վ.Բաբայան, Ա.Գ. Շահինյան եւ Ա.Ի.Ղարիբջանյան (քարտուղար), իր 2011թ. նոյեմբերի 23-ի նիստում քննարկման էր ներկայացրել «Օրինջ Բրենդ Սերվիսիզ Լիմիթիդ» ընկերության ներկայացուցիչ Է. Նահապետյանի կողմից 2011թ. հոկտեմբերի 19-ին «ORANGE» համակցված ապրանքային նշանի հանրահայտ ճանաչման վերաբերյալ դիմումը:

«Օրինջ Բրենդ Սերվիսիզ Լիմիթիդ» ընկերությունը խնդրում է ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում հանրահայտ ճանաչել 2010թ. մարտի 1-ից ստորև նշված ապրանքների և ծառայությունների համար՝ Դաս 9. Բջջային հեռախոսներ, մոդեմներ, Դաս 35. Բջջային հեռախոսների, մոդեմների, նոութբուքների, պլանշետային համակարգիչների և նշված բոլոր ապրանքների աքսեսուարների վաճառք, Դաս 38. Հեռահաղորդակցական ծառայություններ, ինտերնետ ծառայություններ, էլեկտրոնային փոստի ծառայություններ, Դաս 41. Զվարճություններ, մշակութային միջոցառումների կազմակերպում:

«Օրինջ Բրենդ Սերվիսիզ Լիմիթիդ» ընկերությունը դիմումին կից ներկայացրել է «ORANGE» ապրանքային նշանի գովազդի տեղադրման վերաբերյալ տեղեկություններ, ՀՀ քարտեզը որի վրա պատկերված են բոլոր այն բնակավայրերը, որտեղ «ORANGE»-ն ունի սպասարկման կետեր (խանութներ), բոլոր սպասարկման կետերի (խանութների) հասցեները, «Օրինջ Բրենդ Սերվիսիզ Լիմիթիդ» ընկերության մամուլի հրապարակումները «ORANGE» ապրանքային նշանի վերաբերյալ, տեղեկատվություն «Օրինջ Բրենդ Սերվիսիզ Լիմիթիդ» ընկերության բարեգործական գործունեության վերաբերյալ, քանակական տեղեկություններ «ORANGE» ապրանքանիշի ներքո տրամադրված ծառայությունների վերաբերյալ, հեռուստա-

ընկերություններով հեռարձակված տեսանյութեր «Օրինջ Բրենդ Սերվիսիզ Լիմիթիդ» ընկերության գործունեության և «ORANGE» ապրանքանիշի վերաբերյալ, ինտերնետ կայքերից հրապարակումներ, 2009թ. նոյեմբերի դրությամբ ընկերության վեբ կայքի էջեր և այլ նյութեր, ինչպես նաև անկախ մասնագիտացված «Մոզաիկ, AM» ՍՊԸ-ի կողմից անցկացված «ORANGE» ապրանքային նշանի ՀՀ տարածքում ճանաչվածությունը հաստատող զանգվածային հարցման հաշվետվությունը:

Դիմումում նշված է, որ 01.03.2010 թվականից սկսած Հայաստանի Հանրապետությունում ապրանքային նշանի հանրահայտ լինելը ապացուցվում է ստորև նշված փաստացի տեղեկություններով:

Նշված է, որ «Ֆրանս Տելեկոմ» խմբի անդամ «Օրանժ Արմենիան» Հայաստանում ծառայություններ է մատուցում 2009 թվականի նոյեմբերի 5-ից:

Ընկերությունը Հայաստանում 2009թ. և 2010թ. կատարել է համապատասխանաբար 140 մլն եվրոյի և ավելի քան 50 մլն դոլարի ներդրումներ և ապահովում է բջջային կապի ու լայնաշերտ շարժական Ինտերնետի հասանելիությունը, ինչպես նաև այլ բոլոր մատուցվող ծառայությունները Հայաստանի 600 քաղաքներում և գյուղերում: «ORANGE»-ի ցանցն այսօր ամենաընդարձակն է Հայաստանում և ծածկում է տարածքի ավելի քան 95% տոկոսը:

Դիմումում նշված է, որ գովազդային վահաններն ու պաստառները, ինչպես նաև հեռուստա և ռադիո գովազդները արդեն տեղադրված էին նույնիսկ մեկ ամիս ավելի շուտ, քան ընկերությունը սկսեց իր պաշտոնական գործունեությունը: Պոստենցիալ սպառողները արդեն մեկ ամիս առաջ ««ORANGE»-ը գալիս է Հայաստան 2009թ. նոյեմբերի 5-ին» գովազդների շնորհիվ քաջ տեղեկացված էին:

Դիմողը նշում է նաև, որ 2009թ. հոկտեմբերի 20-ից մինչև նոյեմբերի 19-ը ընկած ժամակահատվածում «orangearmenia.am» կայք այցելել են 386960 անգամ, որը վկայում է, որ «ORANGE»-ի գործունեությունը արդեն իսկ մեծ հետաքրքրություն էր ներկայացնում մինչև պաշտոնական գործունեության մեկնարկի օրը, որի վկայությունն է «Մոզաիկ. AM» ՍՊԸ-ի կողմից անցկացված «ORANGE» ապրանքային նշանի ճանաչվածությունը հաստատող զանգվածային հարցման հաշվետվությունը:

Կոլեգիայի քննարկման արդյունքները ներկայացնելիս նշվեց, որ «Օրինջ Բրենդ Սերվիսիզ Լիմիթիդ» ընկերության կողմից 2011թ. հոկտեմբերի 19-ին ներկայացվել է դիմում «ORANGE» համակցված ապրանքային նշանը 9-րդ, 35-րդ, 38-րդ և 41-րդ դասերի համար

հանրահայտ ճանաչելու վերաբերյալ: Համառոտ ներկայացվեց դիմումի բովանդակությունը և փաստերը, որոնք վկայում են հիշյալ ապրանքային նշանի հանրահայտ լինելը:

Կոլեգիան քննարկելով ներկայացված նյութերը՝ առաջարկեց դիմումը բավարարել մասնակիորեն եւ «ORANGE» համակցված ապրանքային նշանը հանրահայտ ճանաչել Նիցցայի համաձայնագրով նախատեսված ԱԾՄԴ 35-րդ դասի «բջջային հեռախոսների, մոդեմների, նոութբուքերի, պլանշետային համակարգիչների և նշված բոլոր ապրանքների աքսեսուարների վաճառք», ինչպես նաեւ՝ 38-րդ դասի՝ «հեռահաղորդակցական ծառայություններ, ինտերնետ ծառայություններ, էլեկտրոնային փոստի ծառայություններ» ծառայությունների համար: Դիմումում նշված մնացած ապրանքների և ծառայությունների համար «ORANGE» համակցված ապրանքային նշանի հանրահայտությունը ներկայացված նյութերով չի հիմնավորված:

Բողոքարկման խորհուրդը ընդհանուր քննարկման արդյունքում, ղեկավարվելով «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով, ինչպես նաև ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության Բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման «Կարգի» 81-րդ կետի 1-ին ենթակետով և «Ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում հանրահայտ ճանաչելու մասին» կարգի դրույթներով

Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել «Օրինջ Բրենդ Սերվիսիզ Լիմիթիդ» ընկերության 2011թ. հոկտեմբերի 19-ի դիմումը մասնակիորեն եւ «ORANGE» համակցված ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում հանրահայտ ճանաչել 2010 թվականի մարտի 1-ի դրությամբ 35-րդ դասի «բջջային հեռախոսների, մոդեմների, նոութբուքերի, պլանշետային համակարգիչների և նշված բոլոր ապրանքների աքսեսուարների վաճառք» եւ 38-րդ դասի՝ «հեռահաղորդակցական ծառայություններ, ինտերնետ ծառայություններ, էլեկտրոնային փոստի ծառայություններ» ծառայությունների համար:

1. Որոշման կայացման թվականը 23.11.2011
2. Հանրահայտ ապրանքային նշանի 47 գրանցման համարը
3. Հանրահայտ ապրանքային նշանի (համակցված ապրանքային նշան) պատկերը

4. Թվականը, որից սկսված ապրանքային նշանը հանրահայտ է ճանաչվում ՀՀ-ում 2010թ. մարտի 1-ից
5. Հանրահայտ ապրանքային նշանի իրավատիրոջ անվանումը եւ գտնվելու վայրը հասցեն «Օրինջ Բրենդ Սերվիսիզ Լիմիթիդ» (St. James Court, Great Park Road, Almondsbury Park, Bradley Stoke Bristol, United Kingdom)
6. Ապրանքների եւ ծառայությունների Միջազգային դասակարգման դասերին համապատասխան խմբավորված այն ապրանքների եւ ծառայությունների ցանկը, որոնց նկատմամբ ապրանքային ճանաչվել է հանրահայտ ԱԾՄԴ 35-րդ դաս՝ «բջջային հեռախոսների, մոդեմների, նոութբուքների, պլանշետային համակարգիչների և նշված բոլոր ապրանքների արտետուարների վաճառք»
- Ապրանքային նշանը 38-րդ դաս՝ «հեռահաղորդակցական ծառայություններ, ինտերնետ ծառայություններ, էլեկտրոնային փոստի ծառայություններ»

Բողոքարկման խորհրդի
նախագահ



Ա.Ազիզյան